ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/132

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Մասնակից՝ «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

1. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/53» ծածկագրով բաց մրցույթ, Կենտրոնի վարչական շրջանի թիվ 20, 21, Նոր Նորք վարչական շրջանի թիվ 99 և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 76 մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում,

2. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրով բաց մրցույթ, Երևան քաղաքի վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.05.2020թ.-ի թիվ 26/26-1/7675-2020 գրությամբ «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 20.05.2020թ.-ի թիվ 01/61-8197 գրության հիման վրա, 23.05.2020թ.-ին «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 23.05.2020թ.-ին:

25.05.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/132 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

04.06.2020թ.-ին և 22.06.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 04.06.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.06.2020թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 20.05.2020թ.-ի թիվ 01/61-8197 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/53» և «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրերով գնման ընթացակարգերին մասնակցության հայտ է ներկայացրել «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Մասնակից):

Երևանի քաղաքապետարանի կողմից կատարվել է բանկային երաշխիքների իսկության ճշտում, որի արդյունքում պարզվել է, որ ներկայացված բանկային Երաշխիքները չեն թողարկվել «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից և հանդիսանում է կեղծ փաստաթղթեր:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման»

կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջներով մերժել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, Պատվիրատուն կից ներկայացրել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/53» և «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրերով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 25.05.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.05.2020թ.-ի թիվ 26/26-1/7675-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2020/132 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Կենտրոնի վարչական շրջանի թիվ 20, 21, Նոր Նորք վարչական շրջանի թիվ 99 և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 76 մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.03.2020թ.-ին և Երևան քաղաքի վարչական

շրջանների բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 25.02.2020թ.-ին հայտարարվել է համապատասխանաբար թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/53» և թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրերով բաց մրցույթներ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

ii. Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ն:

iii. «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/53» և թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրերով բաց մրցույթների հրավերներով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/53» ծածկագրով բաց Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.05.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից կատարվել է «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքի իսկության ճշտում, որի արդյունքում պարզվել է, որ ներկայացված բանկային երաշխիքը չի թողարկվել համապատասխան բանկի կողմից և հանդիսանում է կեղծ փաստաթուղթ:

v. Նույն արձանագրության համաձայն՝ հաշվի առնելով, որ «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ն մինչև պայմանագրի կնքումը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր և վերջինս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ուստի հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետը, որոշել է չեղյալ հայտարարել 2020թ.-ի ապրիլի 30-ի թիվ 3 արձանագրության 2.1 և 2.2 կետերով ընդունված որոշումները և «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը մերժել:

vi. թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրով բաց Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 14.05.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից կատարվել է «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքի իսկության ճշտում, որի արդյունքում պարզվել է, որ ներկայացված բանկային երաշխիքը չի թողարկվել համապատասխան բանկի կողմից և հանդիսանում է կեղծ փաստաթուղթ:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ հաշվի առնելով, որ «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ն մինչև պայմանագրի կնքումը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր և վերջինս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ուստի հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետը, որոշել է չեղյալ հայտարարել 2020թ.-ի ապրիլի 16-ի թիվ 4 արձանագրության 2.1 և 2.2 կետերով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընդունված որոշումները, «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել:

viii. «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն 04.05.2020թ.-ին տրված թիվ «O.AB.100.7LD.ALLP.0.5161.20» գրությամբ Երևանի քաղաքապետարանին տեղեկացրել է, որ «Ամերիաբանկ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Բանկ) ունեցած տեղեկությունների համաձայն՝ Երևանի քաղաքապետարանին ներկայացված «Ամերիաբանկ» ՓԲԸ պաշտոնական ձևաթղթին նմանեցված 27.04.2020թ.-ի թիվ O.AB. 100.12CIB.PIED.1.4435.20 «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ի բանկային երաշխիքը՝ ԵՔ-ԲՄԱՁԲ-20/53 ծածկագրով մրցույթին մասնակցելու համար և 12.03.2020թ.-ի թիվ O.AB. 100.12CIB.PIED.2.0245.20 «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ի բանկային երաշխիքը՝ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64 ծածկագրով մրցույթին մասնակցելու համար ներկայացված երաշխիքները իրականում երբևէ չեն թողարկվել և երբևէ չեն տրվել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից, և ամենայն հավանականությամբ դրանք կեղծվել են անհայտ երրորդ անձի կամ անձանց կողմից, ինչի վերաբերյալ Բանկի համապատասխան աշխատակիցներն արդեն դիմել են իրավապահ մարմիններին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.05.2020թ.-ի թիվ 26/26-1/7675-2020 գրությամբ «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/53» և թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրերով բաց մրցույթների հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.14-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ

մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ: Ընդ որում, եթե մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը հստակ սահմանել է, որ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Ընդ որում, պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով՝ որպես պարտավորությունների պատշաճ կատարման իրավական ակտի պահանջ, սահմանվել է պարտավորության խախտման հիմքերը, այն է՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Երևանի քաղաքապետարանի կողմից Կենտրոնի վարչական շրջանի թիվ 20, 21, Նոր Նորք վարչական շրջանի թիվ 99 և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 76 մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.03.2020թ.-ին և Երևան քաղաքի վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 25.02.2020թ.-ին հայտարարված համապատասխանաբար թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/53» և թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրերով բաց մրցույթներին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ն որպես

որակավորման ապահովում ներկայացրել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի պաշտոնական ձևաթղթին նմանեցված 27.04.2020թ.-ի թիվ O.AB.100.12CIB.PIED.1.4435.20 և 12.03.2020թ.-ի թիվ O.AB.100.12CIB.PIED.2.0245.20 բանկային երաշխիքներ, որոնք իրականում երբևէ չեն թողարկվել և երբևէ չեն տրվել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից:

թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/53» և թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրերով բաց մրցույթների Հանձնաժողովի կողմից կատարված «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքի իսկության ճշտմամբ պարզվել է, որ ներկայացված բանկային երաշխիքները չեն թողարկվել համապատասխան բանկի կողմից և հանդիսանում է կեղծ փաստաթուղթ:

Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ն մինչև պայմանագրի կնքումը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր և վերջինս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը որոշել է «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից 04.05.2020թ.-ին Երևանի քաղաքապետարանին տրված թիվ «O.AB.100.7LD.ALLP.0.5161.20» գրությամբ հաստատվում է, որ «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ի կողմից Պատվիրատուին ներկայացված 27.04.2020թ.-ի թիվ O.AB.100.12CIB.PIED.1.4435.20 և 12.03.2020թ.-ի թիվ O.AB.100.12CIB.PIED.2.0245.20 բանկային երաշխիքներն իրականում երբևէ չեն թողարկվել և երբևէ չեն տրվել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից, և ամենայն հավանականությամբ դրանք կեղծվել են անհայտ երրորդ անձի կամ անձանց կողմից:

Հակառակ փաստի մասին վկայող որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց, Ընթացակարգի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձին չներկայացվեցին, որպիսի պայմաններում հնարավոր կլիներ և կհիմնավորվեր բանկային երաշխիքների իսկության հանգամանքը:

Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը *(տես՝ թիվ ԵԱՆԴ/0479/02/08 գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 13-ի որոշումը):*

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով ապացուցման առարկան ձևավորվում է ոչ միայն հայցի կամ դրա դեմ բերվող

առարկությունների հիմքում ընկած փաստերից, այլև վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավանորմում մատնանշված փաստերից *(տես՝ թիվ ԵԱՔԴ/0232/02/11 գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումը):*

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/53» և թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրերով բաց մրցույթների հրավերներով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում պարտավոր է ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում: Հակառակ դեպքում՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում որակավորման ապահովում չներկայացնելու պարագայում, այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ն խախտել է գնման գործընթացի

շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.05.2020թ.-ի թիվ 26/26-1/7675-2020 գրությամբ «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/132 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ